



**Հավերի կերակրման,  
խնամքի և բուժման  
պայմանները**



## Հավաբնի կառուցման սխեմա





## Հավերի կերակրում

2 ամսական հավերի հիմնական կերն աղացած եգիպտացորենն է: Կերաբաժնում (ռացիոն) պետք է ներառել նաև արևածաղիկ, ցորեն ու գարի:

**Համակցված կերի** 20-30 %-ը պետք է բաղկացած լինի աղացած ցորենից, իսկ գարին ավելի քիչ մասը պետք է կազմի և տրվի աղացած վիճակում՝ առանց թեփի:

Համակցված կերի պատրաստման համար հարկավոր է՝

- աղացած եգիպտացորեն՝ 50 %,
- աղացած ցորեն՝ 20-30 %,
- արևածաղկի քուսպ՝ թեփը հանած՝ 15 %,
- հանգած կիր կամ կավիճ,
- աղ, սոդա:

Այս հասակի հավերին չի կարելի կերակրել թեփով, քանի որ ստամոքսում կարող է խցանում առաջանալ: Վարսակ նույնպես խորհուրդ չի տրվում տալ:

Հավերին պարտադիր պետք է կերակրել կտրտած կանաչ խոտով:

Հավաբնում դնել ավազով լցված աման: Ավազի որոշակի քանակությունը նպաստում է հավերի ստամոքսում կերի մանրացմանը և մարսողության արագացմանը:

Փոքր քանակներով կարելի է տալ լիզին, մեթիոնին, որոնք նպաստում են սպիտակուլցների սինթեզին (առաջացմանը):



Կարելի է հավաքել 1-2 ժամ դնել թարմ մսաջուր, որը սակայն մինչև թթվելը պետք է հեռացնել: Նման կերպ վարվելով, կկանխեք աղիքային հիվանդության առաջացումը:

Օրվա ընթացքում 2 ամսական հավն ուտում է մոտ 60 գ կեր: Այսինքն, եթե ունեք 20 հավ, ապա մեկ ամսում անհրաժեշտ կերի քանակը կկազմի՝ 20 հավ x 60 գ կեր x 30 օր = 36 000 գ կամ 36 կգ:

Չի կարելի օգտագործել խտացրած հորմոնալ կեր:

Հավերի արածեցման համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան պայմաններ: Դրա համար պետք է ընտրել խոտածածկ տարածք:

Հավաքելով դնել մոխրով լցված աման:

Երևանյան կարմիր հավերը ձու սկսում են ածել 4,5-5 ամսականից սկսած: Այդ տարիքի հավերին եգիպտացորենով կերակրել հարկավոր չէ: Կերաբաժինն ավել շատ պետք է բաղկացած լինի ցորենից ու վարսակից: Կերը պետք է լինի համակցված և ներառի նաև մսայուր, ձվի կճեպի փոշի, ոսկրայուր:

Աձան հավերին պետք է պահել ազատ պայմաններում՝ խոտով և հողում գտնվող որդերով սնվելու համար:

## Հիվանդություններ և բուժում

Նշենք հաճախ հանդիպող հիվանդություններից և դրանց բուժման պարզ եղանակներից մի քանիսը:



**Տզով վարակվածության** դեպքում՝ հավաքում հետևյալ մոխրով լցված աման:

Այս հիվանդության դեպքում հավերը հիմնականում նստում են և չեն շարժվում:

Խառնել աղը ձեռքի հետ և քսել թևի տակ գտնվող տզի վրա:

## **Ինֆեկցիոն բրոնխիտի բուժում**

Ինֆեկցիոն բրոնխիտի դեմ H-120 շտամից ստեղծված պատվաստանյութը նախատեսված է ցանկացած տարիքի կլինիկապես առողջ թռչունների համար (կախված հավերի ինֆեկցիոն բրոնխիտի վիրուսի հետ կապված էպիզոոտիկ իրավիճակից):

100 թռչնին անհրաժեշտ է 1 սրվակ պատվաստանյութ: 2 ամսականից բարձր տարիքի հավերի պատվաստումը կնպաստի այն բանին, որ ձեռք բերված իմունիտետի շնորհիվ հավերը 5-6 ամիս չեն հիվանդանա տվյալ հիվանդությամբ:

5-6 ամսական հասակում պատվաստումը պետք է կրկնել:

Պատվաստումն իրականացվում է երկու անգամ՝ 10-14-օրյա ընդմիջմամբ՝ աչքի կամ քթանցքի մեջ կաթեցնելով կամ խմեցնելով: Խմեցնելու միջոցով պատվաստումից մեկ օր առաջ պետք է հաշվել, թե որքան ջուր է խմում 1 հավը 30 րոպեի ընթացքում (մլ-ով հաշվված): Հաջորդ օրը պատվաստանյութը լուծում են այնպես, որ 1 հավի համար հաշվված քանակությամբ ջուրը պարունակի պատվաստանյութի 1 դեղաչափ: Պատվաստանյութով սրվակի պարունակությունը լուծում են մաքուր, եռացրած և միջև սենյակային ջերմաստիճանը սառեցված ջրում: Խորհուրդ է տրվում օգտագործել կաթի փոշու 1 %-ոց լուծույթ՝ պատվաստանյութը լուծելու և պատվաստանյութի վիրուսը երկար պահպանելու համար: Ջրամանները, որոնց մեջ պետք է լցվի լուծված պատվաստանյութը, պատվաստումից առաջ հարկավոր է ինսամքով լվանալ՝ առանց ախտահանիչների օգտագործման: Պատվաստումից առաջ, ածան հավերին չի կարելի ջուր խմեցնել կամ կերակրել 4 – 8 ժամ, իսկ մաստու հավերին՝ 2-3 ժամ: Ջուր խմեցնել կամ կերակրել թույլատրվում է պատվաստումից միայն 2 ժամ հետո:

**Սպիտակ լուծն** արագ տարածվող և վատ ելքով հիվանդություն է: Հիվանդության առաջացմանը նպաստում են խոնավ և շոգ պայմանները:

Նախապես հիվանդ հավին պետք է մյուսներից առանձնացնել և բուժել «Բայտրիլ 10 %-ոց» պատրաստուկով:

«Բայտրիլ 10 %-ոց» հակաբիոտիկն օգտագործվում է թռչունների (հավեր, սագեր, աղավախներ և այլն) վարակիչ հիվանդությունների դեպքում, որոնք առաջանում են հետևյալ հարուցիչների պատճառով՝ Էշերիխիա,

սամոնեյլա, միկոպլազմա, հեմոֆիլի ցուպիկ, կլոստրիդիա, բակտերիոդներ:

Դրանք կարող են լինել նաև շնչառական համակարգի ախտահարումներ, օրինակ՝ ռինիտ, բրոնխիտ, որոնք դրսևորվում են խոխոռոցով և կտուցից լորձի արտազատմամբ: Բացի այդ, թռչունների մոտ կարող է առաջանալ մարսողական համակարգի ախտահարում կամ կոնյուկտիվիտ, որի դեպքում աչքերից արտազատվում է թարախ:

«Բայտրիլ 10 %-ոց» պատրաստուկը բացում են ջրով և խմեցնում: 0,5 մլ դեղորայքը պետք է բացել 1 լ ջրում և հիվանդության թեթև ընթացքի դեպքում խմեցնել 3 օրից ոչ պակաս, իսկ ծանր ընթացքի դեպքում՝ 5 օրից ոչ պակաս: Եթե 3-5 օր հետո դրական արդյունք չի նկատվում, ապա այն պետք է փոխարինել մեկ այլ հակաբիոտիկով:

«Բայտրիլ 10 %-ոց» պատրաստուկը չի կարելի օգտագործել ածան հավերի դեպքում, քանի որ այն կուտակվում է հավկիթում:

Հիշե՛ք, որ սա հակաբիոտիկ է և հակացուցված է առողջ հավերին:

Կարելի է տալ թույլ պերմանգանատի (մարգանցովկա) լուծույթ:

**Կարմիր լուծի** դեպքում թռչնադրում արյան հետքեր են նկատվում: Սա հեշտ բուժվող հիվանդություն է: Բուժումը կատարվում է «Բայկոքս» դեղամիջոցի օգնությամբ: Հավերի մոտ կոկցիդիոզ հիվանդության բուժման արդյունավետ դեղամիջոց է, որը նախատեսված է տարբեր տեսակի թռչունների, այդ թվում երիտասարդ ածան հավերի համար:

1 մլ դեղորայքը խառնել 1 լ խմելու ջրին, պատրաստված լուծույթը տալ հավերին 48 ժամվա ընթացքում (տալ 24 օր): Եթե հիվանդությունը ծանր է ընթանում, 5 օր հետո կրկնել բուժումը:

Դեղի չափաքանակը կարելի է հաշվել՝ ելնելով տվյալ տնտեսության հավերի քաշից: 28 մլ դեղորայքն անհրաժեշտ է խառնել 28 լ խմելու ջրին և տալ հավերին: Սա արվում է այն դեպքում, երբ բոլոր հավերի ընդհանուր քաշը մոտ 100 կգ է:

5 օր շարունակ 2-3 անգամ տալ յուղագրկված թան՝ համեմված կտրտած կանաչ սխտորով:

Հավերի ջուրն օրական փոխել, քանի որ վատորակ ջուրը պատճառ է դառնում կարմիր լուծի առաջացման:

Դեղորայքն ունի սահմանափակումներ: Այն չի կարելի օգտագործել կոկցիդիոզով հիվանդ ածան հավերի բուժման կամ հիվանդության կանխարգելման նպատակով, քանի որ դեղորայքն ունի հավկիթում կուտակվելու հատկություն: Բացի այդ, հավի միսը կարելի է օգտագործել ոչ շուտ, քան տվյալ դեղամիջոցի վերջին չափաքանակն ընդունելուց 8 օր հետո:

**Փետրաթափությունը** կարող է առաջանալ հավաքելի վատորակ օդի, վիտամինի պակասի կամ որդակրության պատճառով: Հարկավոր է հետևել հավաքելի մաքրությանը և օդափոխությանը:

**Վիտամինի պակասի** դեպքում ջրի հետ խառնել մի քիչ կիտրոնի աղ:

Այս ժամանակ օգտակար կարող է լինել կարմիր գույնի լամպի միջոցով հավաքելում լուսավորության ապահովումը: Համակցված կերին կարելի է ավելացնել «Պրեմիքս», որը կենսաբանորեն ակտիվ նյութերի համասեռ խառնուրդ է: Գոյություն ունի 3 տեսակի պրեմիքս՝ վիտամինային, միներալային և վիտամինամիներալային՝ թույլատրելի տոկոսային խտությամբ:

**Որդակրության (ճիճվակրության)** դեպքում բուժումը կատարվում է «Ալբեն» կամ «Ալվետ» պատրաստուկների օգնությամբ:

Անհրաժեշտ է կանոնավոր կերպով իրականացնել որդակրության կանխարգելում, որն ընտանի թռչունների շրջանում բավականին տարածված հիվանդություն է:

«Ալբեն»-ը ճիճվաթափության համար նախատեսված պատրաստուկ է: Արտադրվում է հաբերի տեսքով: Արագ ներգործում է մակաբույծների վրա՝ հանգեցնելով կաթվածի, որն էլ դրանց ոչնչացման պատճառ է դառնում: Սատկած որդերը օրգանիզմից դուրս են գալիս արտաթորանքի հետ միասին: Այս դեղամիջոցը բազմաֆունկցիոնալ է, այսինքն, այն կարող է օգտագործվել ոչ միայն բուժման, այլև կանխարգելման նպատակով:



Ինչպե՞ս խմեցնել «Ալբեն»-ը: Այս դեղամիջոցը դժվար է լուծվում ջրում: Պետք է հաշվի առնել, որ ոչ միշտ է հաջողվում հետևել, թե արդյո՞ք բոլոր հավերն են ջուր խմել: Ուստի ավելի լավ է յուրաքանչյուր հավի խմեցնել առանձին: Նախապես հարկավոր է հավին կշռել՝ ճիշտ դեղաչափը որոշելու համար: Հաբը պետք է մանրացնել և խառնել ջրին:

Մեկ հաբը բավարար է 35-40 կգ ընդհանուր քաշի դեպքում: Եթե հավը միջինում կշռում է 2 կգ, հետևաբար 1 հաբը կբավականացնի 18-20 հավին:

Ջրում լուծված դեղորայքը հավի բերանը լցնում են ներարկիչի միջոցով: Բնականաբար, թռչնին չվաստելու համար, ներարկիչի վրայից պետք է հանել ասեղը:

**«Ալբետ»**—ը բավականին թունավոր նյութ է, ուստի այն պետք է օգտագործվի զգուշությամբ: Կան նաև օգտագործման որոշակի հակացուցումներ: Օրինակ, այս դեղամիջոցը հակացուցված է այն թռչուններին, որոնք հյուծված են կամ տառապում են որևէ վարակիչ հիվանդությամբ: Բացի այդ, «Ալբետ»—ի օգտագործումն ազդում է կենդանիների կաթի, ձվի և մսի բաղադրության վրա: Հետևաբար, կենդանիների սպանող թույլատրվում է կատարել ճիճվաթափությունից 2 շաբաթ անց, իսկ հավերի մորթը՝ 7 օր հետո:



**«Ալբետ»** դեղամիջոցն արդյունավետորեն պայքարում է որդերի (սեմատոդներ, տրեմատոդներ և այլն) դեմ:

Պատրաստուկի գործող նյութն ալբենդազոլն է, որը խախտում է որդերի մոտ գլյուկոզայի ներծծման գործընթացը, ինչն էլ հանգեցնում է դրանց կործանմանը: Այս դեղամիջոցը հատիկների տեսքով բաց գույնի փոշի է, որն արտադրվում է տարբեր կշռաբաշխմամբ փաթեթներով՝ 50 գ, 250 գ և այլն:

Դեղամիջոցն օգտագործվում է ասկարիդոզ և հետերակիդոզ հիվանդությունների բուժման համար՝ երկու օր անընդմեջ առավոտյան կերակրելիս խառնելով դեղորայքը համակցված կերին՝ 0,5 գ դեղորայքը 10 կգ թռչնի քաշի հաշվարկով (10 մգ / կգ ալբենդազոլ):

Այս դեղամիջոցն ածան հավերին հակացուցված է:

## Պահելու պայմաններ

Հավաբունը պետք է բաղկացած լինի փակ շինությունից՝ գիշերելու, տեղումներից և արևի կիզիչ ճառագայթներից պաշտպանվելու համար, և ցանկապատված զբոսաբակից, որտեղ տեղադրվում են կերամաններն ու ջրամանները: Չբոսաբակի ցանկապատի բարձրությունը պետք է լինի 1,5 մ–ից ոչ պակաս: Ցանկապատի ներքևի մասը պետք է հողին ամրացված լինի, որպեսզի հավերը չկարողանան դուրս գալ, և դրսից ոչ մի կենդանի չկարողանա մտնել: Հավաբունը պետք է չորս կողմից պաշտպանված լինի կենդանիների հարձակումից և չունենա անցքեր՝ ելքի և մուտքի համար:

Հավաբնի փակ հատվածը պետք է լինի չոր և հեշտ օդափոխվող: Ցանկայի է պատերի և առաստաղի վրա ունենալ էլեկտրական կամ խողովակային օդափոխիչներ, որոնք պետք է ապահովեն խոնավության ավելցուկի դուրս բերումը և թարմ օդի ներմղումը հավաբուն, քանի որ թռչունների օրգանիզմն, ի տարբերություն մյուս կենդանիների և մարդու, մի քանի անգամ ավելի շատ թթվածնի պահանջ ունի:





Հատակին պետք է փռված լինի 4-5 սմ հաստությամբ չոր ծղոտ կամ փայտի խոշոր թեփ: Դրա շնորհիվ փոքր հասակի հավերը, որոնք դեռևս չեն կարողանում նստել թառի վրա, չեն մոսի: Ծղոտը ցանկալի է պարբերաբար փոխել:

Անհրաժեշտ պայմաններից է հավաբնի հատակի չոր լինելը:

Գիշերելու համար պետք է լինեն թառեր, ածան հավերի համար՝ նաև ձվաբներ, օրինակ, ծղոտից գործած և ծղոտով ծածկված լայն զամբյուղներ կամ արկղեր:

Լուսային օրվա տևողությունը պետք է լինի ոչ ավել քան 12-16 ժամ: Հավաբնի լույսը երեկոյան պետք է անջատել:

Զմռանը ցերեկային ժամերի կարճատևության պատճառով հավաբնի փակ շինությունը պետք է ապահովել էլեկտրական լուսավորությամբ:




## Թռչնապահություն և ձվատվություն

Հավերը սկսում են ձու ածել 4,5-5 ամսական հասակում: Հավերի ձվատվությունը հատկապես բարձր է 18 ամսականում, որից հետո այն նվազում է: Ուստի անընդհատ ձվատվության ապահովման համար հարկավոր է թուխս նստեցնել, ճտեր ստանալ, որոնք հետագայում կփոխարինեն 22-23 ամսական հավերին: Ձվատվության համար շատ կարևոր են թե՛ կերի բաղադրությունը և թե՛ հավաբնի պայմանները՝ լուսային ու ջերմային ռեժիմը: Հավաբնի ջերմաստիճանը պետք է լինի 14 - (+23)°C, այլապես ձվատվությունը, հատկապես՝ ձմռան ամիսներին կնվազի:


Լամպի լույսը կամ ամանով դրված տաք հանգած մոխիրը կարող են հավաբնում ապահովել ջերմության որոշակի քանակ:

Հավերի հետ միասին հարկավոր է պահել աքաղաղ՝ 10 հավին 1 աքաղաղի հաշվարկով:





20 հավի համար նախատեսված հավարնի սիեմա



Հավարնի կառուցման սիեման ներսից



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է Ավստրիայի արտաքին գործերի նախարարության համագործակցության զարգացման ակումբ 0.7 %-ի աջակցությամբ՝ «Սոցիալական ձեռներեցության զարգացում փոքր թռչնաբուծական տնտեսությունների համար Ոսկեվան համայնքում» ծրագրի շրջանակում:



**RURAL SUSTAINABLE DEVELOPMENT**  
AGRICULTURAL FOUNDATION

«Գյուղի կայուն զարգացում»  
գյուղատնտեսական հիմնադրամ, 16  
թաղամաս, 44 շենք, 48 բնակարան, ք.  
Երևան, Հայաստան

Էլ. փոստ՝ [info@ruraldaf.am](mailto:info@ruraldaf.am)  
Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>